ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/15

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2017թ. թիվ 03/73-3/9939-17 գրությամբ «Հուսալի կամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 16.05.2017թ. թիվ 01/61-8690 գրության հիման վրա, 02.06.2017թ. թիվ 03/73-3/9939-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին

(այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 12.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.03.2017թ. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հետ կնքված պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հիման վրա իրականացնում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների որակի ամենօրյա տեխնիկական հսկողության ծառայություններ: Շինարարական աշխատանքները իրականացվում են «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից, որոնք սկսվել են 14.03.2017թ.:

Առաջին իսկ օրվանից տեխնիկական հսկիչներ Սևադա Պողոսյանը և Վահագն Սարգսյանը կատարել են ամենօրյա այցելություններ, ստուգել և հետևել իրականացվող շինարարական աշխատանքների որակին և ծավալներին, ստուգել օգտագործվող նյութերի համապատասխանությունը՝ համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի: Պարբերաբար այցելություններ կատարել է նաև Ընկերության տնօրեն Վալերիկ Առաքելյանը: Տեխնիկական հսկիչները իրենց պարտականությունները կատարել և կատարում են ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. հրամանով հաստատված «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» IV գլխի 3-րդ ենթակետի համաձայն: Ամենօրյա այցելությունները տեխնիկական հսկիչի կողմից պետք է հաստատվեն գրառումներով, որոնք կատարվում են պատվիրատուի կողմից տրված շինարարության վարման մատյանում, որը բացակայում է շինարարական ընկերությունում:

Տեխնիկական հսկիչների ամենօրյա, ինչպես նաև տնօրենի կողմից կատարված պարբերաբար այցելությունները համապատասխանում են իրականությանը, որը

հաստատում են նաև շինարարական աշխատանքները իրականացնող «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրենը և աշղեկը:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների կողմից կազմվել են արձանագրություններ (առանց ներկաների կամ այլ անձանց ստորագրությունների) ըստ որի՝ վերջիններս արձանագրել են ենթադրյալ խախտում (որը Ընկերությունը չի ընդունում), մասնավորապես՝ «սանհանգույցների սվաղման ժամանակ ց.ա սվաղն իրականացվում է հին գաջի սվաղի վրայով...»:

Վերոհիշյալ գրությամբ Ընկերությունը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Տվյալ դեպքում Ընկերությունը էական խախտում թույլ չի տվել և էական խախտման հասկացությունը պետք է հասկանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված կետով: Մասնավորապես էական խախտումը պետք է պատճառի այնպիսի վնաս, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Ընկերությունը հայտնել է, որ իրականացրել է և մինչ օրս իրականացնում է տեխնիկական հսկողության ծառայություններ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, աշխատում է գրեթե բոլոր նախարարությունների, մարզպետարանների, ԾԻԳ-ի և այլ պատվիրատուների հետ, ունի բազմամյա փորձ, համալրված փորձառու տեխնիկական հսկիչներով աշխատակազմ, իսկ Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են բարեխղճորեն, պատշաճ որակով, ժամանակին և երբևիցե Ընկերությունը չի առնչվել նման խնդրի հետ: Նշված այն փաստը, թե տեխնիկական հսկիչները պարբերաբար և ամենօրյա տեխնիկական հսկողություն չեն իրականացրել, ըստ ընկերության, փաստացի չի համապատասխանում իրականությանը և կրում է միտված բնույթ՝ վնասելու Ընկերությանը:

Ընկերությունը գտնում է, որ Պայմանագրի միակողմանի լուծումը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմպերատիվ պահանջներից և նման պայմաններում Պատվիրատուն իրավունք չուներ Պայմանագիրը լուծել:

Ընկերությունը նշել է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին ուղղված գրությամբ (կցվել է) տեխնիկական հսկիչներ՝ Սևադա Պողոսյանի, Վահագն Սարգսյանի. «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Էլյազյանի, նույն ընկերության աշղեկ՝ Համբարձում Հակոբյանի կողմից հաստատվել է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է տեխնիկական հսկիչների ամենօրյա այցելություններ շին. հրապարակ:

Խորհրդին ուղղված 26.06.2017թ. գրությամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ներկայացրել է շինարարական աշխատանքների պատշաճ կատարման ընթացիկ և սկզբնական վիճակի աշխատանքների կատարման թվով 18 լուսանկարներ, որով ըստ Ընկերության հերքվում է Պատվիրատուի փաստարկները կատարված աշխատանքի, որակի, ինչպես նաև Ընկերության կողմից հսկողություն չիրականացնելու վերաբերյալ փաստարկները, քանի որ այդ ամենը արձանագրվել է Ընկերության աշխատակիցների, կապալառուի կողմից և ապահովել բարձր որակ: Ընկերությունը ներկայացրել է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի մասնագետների մասնագիտական որակավորումները հավաստող ապացույցներ:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացվել է նաև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Առաքելյանի, տեխնիկական հսկիչներ՝ Ս. Պողոսյանի, Վ. Սարգսյանի, «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Էլյազյանի, նույն կազմակերպության աշղեկ՝ Հ. Հակոբյանի կողմից 26.06.2017թ. կազմված արձանագրությունը, համաձայն որի նշված անձինք հաստատում են, որ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզում կատարվել է հիմնանորոգման աշխատանքներ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից, ինչը իրականացվել է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի մասնագետների կողմից որակի ամենօրյա տեխնիկական հսկողությամբ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.06.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկ-ները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 16.05.2017թ. թիվ 01/61-8690 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն) համաձայն նույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

Վերը նշված կետի համաձայն՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները, այն է՝ Կատարողը չի ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայացումը շինարարական օբյեկտում, ինչի առնչությամբ կազմված համապատասխան արձանագրությունները և աշխատակազմի ֆինանսական վարչության պետի համապատասխան գրությունը տրամադրվել է վերջինիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը առաջարկել է Կատարողին Պայմանագիրը 12-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ինչպես նաև ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.2 կետով հաշվարկված տույժը՝ 2280 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.06.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/15 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/15 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն) համաձայն նույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ ենթակետի 16-րդ կետով սահմանվել է շինարարության ողջ ընթացքում օբյեկտում տեխ. հսկիչի մշտական ներկայացությունը ապահովելու պարտականությունը:

4. Պատվիրատուի կողմից 10.04.2017թ. կազմված թիվ 06ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում, 10.04.2017թ. ժամը 14:20-16:40 դրությամբ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ. 162, Դավթաշենի հ. 59 և հ. 60 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

5. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ուղղված 11.04.2017թ. թիվ 09/1482 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ համաձայն Պատվիրատուի և Ընկերության միջև կնքված Պայմանագրի 2.1.1 ենթակետի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

ֆինանսական վարչության աշխատակիցները 10.04.2017թ. կատարած շրջայցի (Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգում, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ. 162, Դավթաշենի հ. 59 և հ. 60) շրջանակներում ստուգել են Ընկերության կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը: Ստուգման ընթացքում պարզվել է, որ Ընկերության կողմից պատշաճ կերպով չեն կատարվել Պայմանագրի հավելված 1-ի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ (շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում) ամրագրված պարտականությունները:

Վերը նշված գրությամբ Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը նախազգուշացրել է, որ նշված խախտումը կրկնվելու դեպքում Ընկերության նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված միջոցները և կից ներկայացրել է ստուգման վերաբերյալ արձանագրությունը:

6. Պատվիրատուի կողմից 14.04.2017թ. կազմված թիվ 11ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում, 14.04.2017թ. ժամը 13:40-ի դրությամբ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

Ընդ որում սանհանգույցների սվաղման ժամանակ ց.ա. սվաղն իրականացվում էր հին գաջի սվաղի վրայով: Աշխատանքների իրականացման ժամանակ տեխնիկական հսկողություն չէր իրականացվում:

7. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ուղղված 05.05.2017թ. թիվ 61/621 գրությամբ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը՝ 12-րդ չափաբաժնի (Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն) մասով միակողմանի լուծելու վերաբերյալ և նշված ծանուցումը հրապարակել է www.gnumner.am համացանցային կայքում:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.06.2017թ. թիվ 03/73-3/9939-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 16.05.2017թ. թիվ 01/61-8690 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ նաև՝

Ծառայություն) համաձայն նույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետը սահմանում է, որ Ծառայությունը մատուցվում է սույն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված է, որ ***տեխնիկական հսկողությունն իրականացնողը պարտավոր է շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:***

Համաձայն Պատվիրատուի կողմից 10.04.2017թ. կազմված թիվ 06ՏՀ արձանագրության՝ Երևանի քաղաքապետարանի և «Հուպալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 10.04.2017թ. ժամը 14:20-16:40 դրությամբ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ. 162, Դավթաշենի հ. 59 և հ. 60 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ***տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել:***

Երևանի քաղաքապետարանը 11.04.2017թ. թիվ 09/1482 գրությամբ Ընկերությանը հայտնել է արձանագրված խախտման մասին՝ կից ներկայացնելով կազմված արձանագրությունը և նախազգուշացրել, որ նշված խախտումը կրկնվելու դեպքում Ընկերության նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված միջոցները:

Պատվիրատուի կողմից 14.04.2017թ. կազմված թիվ 11ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 14.04.2017թ. ժամը 13:40-ի դրությամբ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ***տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել***, ինչպես նաև արձանագրվել է, որ սանհանգույցների սվաղման ժամանակ ց.ա. սվաղն իրականացվում

էր հին գաջի սվաղի վրայով: ***Աշխատանքների իրականացման ժամանակ տեխնիկական հսկողություն չէր իրականացվում:***

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ուղղված 05.05.2017թ. թիվ 61/621 գրությամբ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը՝ 12-րդ չափաբաժնի (Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հ. 60 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն) մասով միակողմանի լուծելու վերաբերյալ և նշված ծանուցումը հրապարակել է www.gnumner.am համացանցային կայքում:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

Նույն կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն թույլ է տվել Երևանի քաղաքապետարանի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 02.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ կետի 16-րդ ենթակետով ստանձնել է շինարարության ողջ ընթացքում տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում ապահովելու պարտականությունը և նույն Պայմանագրի 2.4.1 կետով պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը, մինչդեռ համաձայն Պատվիրատուի կողմից կազմված արձանագրությունների՝ Ընկերությունը չի ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայությունը շինարարության օբյեկտում:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, գտնում ենք, որ առկա չէ Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների ,մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2017թ. թիվ 03/73-3/9939-17 գրությամբ «Հուսալի կամար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09811047) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**